# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 59 - 60 (16760) ՇԱԲԱԹ 27 ՀՈՒԼԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԵՐԿՐԻ ԻՆԿԼՅՈՒԶԻՎ ԱՃԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՄԻԱՅՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ»

*Հուլիսի 23-ին Թբիլիսիի «Ստամբա» հյուրանոցում անցկացվեց «Շրջանների զարգացում 2019» ծրագրի շնորհանդեսը՝ նվիրված շրջաններում իրականացված նախագծերի եւ «Լեռան» հիմնադրամների, կրթության, ենթակառուցվածքի եւ գյուղի աջակցության ծրագրերի շրջանակներում ֆինանսավորված նախագծերի կատարման վեց ամիսների արդյունքների հանրագումարմանը:*

Շնորհանդեսին զեկույցով հանդես եկավ Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլին:

Նախարարի խոսքով, 2019 թվականի վեց ամիսների համար նախատեսված ծրագրերը լրիվությամբ կատարվել են: Նախարարության կողմից տարածաշրջանային ենթակառույցների կարգավորման համար արդեն ծախսվել է շուրջ 200 միլիոն լարի: Նախարարը առանձնակի կանգ առավ բարձրադիր տարածաշրջանների զարգացման թեմային՝ նշելով, որ Վրաստանի բարձրադիր բնակավայրերի զարգացման հիմնադրամի, գյուղի աջակցության նախագծի շնորհիվ, 2019 թվականին բարձրադիր բնակավայրերում իրականացվելու է 6700 նախագիծ, որի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 400 միլիոն լարի: Նախարարի խոսքով, այս տարի ֆինանսավորվող նախագծերի թիվը, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 28 տոկոսով: Բարձրադիր բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ծրագրված 1200 նախագծեր ներառում են ճանապարհների շինարարության, ջրամատակարարման հա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՆԵՆ ԸՆԴԳԾՎԱԾ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԹԲԻԼԻՍԻ

*Հուլիսի 24-25-ը պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը: Այցի շրջանակներում, Հայաստանի ԱԳ նախարարը հանդիպումներ ունեցավ իր վրաց գործընկեր Դավիթ Զալկալիանու, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալաքվաձեի հետ: Զոհրաբ Մնացականյանը հանդիպում ունեցավ նաեւ վիրահայ համայնքի ներկայացուցիչների հետ, ծաղկեպսակ դրեց Վրաստանի անկախության համար զոհվածների հուշակոթողին:*

#### ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍՏԱԿ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Հուլիսի 24-ին Վաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդիպում ունեցավ պաշտոնական անդրանիկ այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ:

Հանդիպմանը Վրաստանի վարչապետը, խոսելով երկու բարեկամ երկրների հարաբերությունների մասին, հիշատակեց իր հանդիպումը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ, որի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց երկկողմ հարաբերությունների էական խորացման եւ ընդլայնման հարցերով: Վրաստանի վարչապետը գոհունակությամբ նշեց, որ ձեռք բերած պայմանավորվածությունները գործնական կիրառում են գտել ինչպես էկոնոմիկայի, այնպես էլ՝ մշակույթի, կրթության

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԸ

*Հուլիսի 24-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն հանրագումարեց խորհրդարանի խոսնակի պաշտոնում հուլիսի 15-20-ը ԱՄՆ կատարած պաշտոնական անդրանիկ այցի արդյունքները:*



Ինչպես նշեց խորհրդարանի խոսնակը, ԱՄՆ կոնգրեսում «Մեր բարեկամների եւ դաշնակիցների հետ» հանդիպումներում քննարկվեցին «Երկկողմ ռազմավարական համագործակցությանն առնչվող գրեթե բոլոր հարցերը»: Արչիլ Թալակվաձեի հավաստմամբ, Վրաստանը մեծ աջակցություն ունի ԱՄՆ-ի ինչպես կոնգրեսում, այնպես էլ՝ պետական դեպարտամենտում:

- Մենք պետք է մեր համագործակցությունը բարձրացնենք է՛լ ավելի բարձր մակարդակի,- հայտարարեց նա:

Նշենք, որ Արչիլ Թալակվաձեն ԱՄՆ կատարած պաշտոնական այցի շրջանակներում հանդիպումներ է ունեցել ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի ինչպես դեմոկրատական, այնպես էլ՝ հանրապետական խմբակցությունների անդամների հետ, որտեղ քննարկվել են երկու երկրների օրենսդիր մարմինների միջեւ համագործակցության խորացման հեռանկարները:

Բացի այդ, Արչիլ Թալակվաձեն հանդիպումներ է անցկացրել նաեւ ԱՄՆ պետական դեպարտամենտի, միջազգային զարգացման գործակալության, Ատլանտյան խորհրդի ազգային ժողովրդավարական ինստիտուտի եւ Համաշխարհային բանկի պաշտոնատար անձանց հետ:

## ԹԲԻԼԻՍԻԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ ՍՈՓԻՈ ԽՈՒՆՃԱՐԻԱՅԻ ՈՒ ՏԻԳՐԱՆ ՎԻՐԱԲՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



*Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի քաղաքապետի տեղակալ Սոփիո Խունճարիան հանդիպել է Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Վիրաբյանին:*

Քննարկել են փոխհամագործակցության խորացմանը, այդ թվում՝ զբոսաշրջությանն ու մշակույթին վերաբերող հարցեր: Գործընկերները քննարկել են նաեւ Թբիլիսիում Երեւանի եւ Երեւանում Թբիլիսիի օրերի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՎԱՆԴԱԿԱՆ

## ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, ՋԻՎԱՆՈՒՆ, ՏԵՐՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ, ԿԱՐԾԱԽՈՒՄ ԵՎ ԳԱՆՁԱՅՈՒՄ

*Անցած շաբաթ օրը՝ հուլիսի 20-ին, Ախալցիխեում, նույն օրը Ախալքալաքիի Կարծախ գյուղում, իսկ հաջորդ օրը՝ հուլիսի 21-ին, Նինոծմինդայի Գանձա գյուղում կայացան գրական-մշակութային միջոցառում նվիրված Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանին, եւ ավանդական Աշուղ Ջիվանու 173 եւ Վահան Տերյանի 134 ամյակներին նվիրված ավանդական օրերը:*

#### ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀՆՉԵՑ ՈՂՋ ԱԽԱԼՑԻԽԵՈՎ ՄԵԿ

Հուլիսի 20-ին բազմամարդ էր Ախալցիխեի Ռաբաթ ամրոցը, ուր տեղի իշխանությունների Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, տեղի ունեցավ Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառում, որը գեղեցիկ եւ սահուն վրացերենով բացեց եւ ներածական խոսքով հանդես եկավ «ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի» ղեկավար, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղի ծնունդ Առուշան Հակոբյանը:

Միջոցառմանն իրականացվեց բանաստեղծի «Թմկաբերդի առումը» պոեմի վիզուալիզացիան (մտածական պատկերացումներ):

«Թմկաբերդի առումը» պոեմի վիզուալիզացիան երբեւէ ամենատպավորիչ իրադարձությունն էր, որին ականատես եղան հյուրերն ու մասնակիցները:

Միջոցառման շրջանակներում, հանդես եկան Պատանի հանդիսատեսի թատրոնը, «Շողակն» ավանդական երաժշտության անսամբլը, «Կարին» ավանդական երգի-պարի համույթը, Երեւանի պետական համալսարանի մշակույթի կենտրոնը:

Նույն օրը Գանձայի «Տերյան մշակութային կենտրոնում» կայացավ եւս մեկ միջոցառում՝ նվիրված Վա-



Ախալցիխե. Ռաբաթ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԵՐԿՐԻ ԻՆԿԼՅՈՒԶԻՎ ԱՃԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՄԻԱՅՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մակարգերի եւ ենթակառուցվածքային այլ օբյեկտների շինարարություն: Նախարարի խոսքով, ներկա դրությամբ, ծրագրի շրջանակներում վերականգնման աշխատանքներ են տարվում 642 դպրոցներում, ինչի համար հատկացվել է 40 միլիոն լարի:

Հանդես գալով տարածաշրջաններում իրականացված նախագծերի եւ «Լեռան» հիմնադրամների, կրթության, ենթակառուցվածքի եւ գյուղի աջակցության ծրագրերի շրջանակներում ֆինանսավորված նախագծերի կատարման վեց ամսվա զեկույցի շնորհանդեսին՝ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն կատարած մեծածավալ աշխատանքի համար շնորհակալություն է հայտնել փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլուն եւ նրա թիմին:

Վարչապետի խոսքով, հզոր տարածաշրջանները նշանակում է հզոր Վրաստան եւ, համապատասխանաբար, տարածաշրջանային զարգացումը իշխանության համար կարեւորագույն առաջնահերթություն է: Ելնելով դրանից՝ 2019 թվականին 20 տոկոսով ավելացել է ենթակառուցվածքային նախագծերի ֆինանսավորումը, փոխվել է տարածաշրջանային կառավարման կառուցվածքը, տարբեր գործընթացները, եւ արդեն կա նաեւ համապատասխան արդյունք:

- Ենթակառույցի եւ տարածաշրջանային զարգացման նախարարությանը հատկացրեցինք 20 տոկոսով ավելի բյուջե, եւ այն վեց ամսվա տվյալներով 100 տոկոսով կատարում է իր առաջադրանքը:



Շրջանային զարգացումը մեզ համար կենսական նշանակության ուղղություն է: Պարտադիր է, որպեսզի Վրաստանում ունենանք ինկլյուզիվ աճ: Դա հնարավոր է անել միայն մեր շրջանների հավասար զարգացմամբ: Ազգային նշանակության նախագծերից բացի, մեր շրջաններում դեռեւս պետք է իրականացնել այնպիսի նախագծեր, որոնք առավել կարեւոր են մեր քաղաքացիների համար, ովքեր բնակվում են Վրաստանի տարբեր շրջաններում,- հայտարարեց վարչապետն ու հավելեց.

- 2022 թվականին Վրաստանն ամբողջովին ժամանակակից ենթակառույցներ կունենա, դա մեզ թույլ կտա միասնական ջանքերով է՛լ ավելի զարգացնել մեր տնտեսությունն ու հաղթահարել աղքատությունը:

Նրա խոսքով, առանց տարածաշրջանների զարգացման Վրաստանի աղքատության նվազեցումն անհնար է:

- Վրաստանի շրջանների բնակչության համար, բացի ազգային նշանակության նախագծերից, ունենք խիստ կարեւոր նախագծեր: Դրանք տեղական նշանակության ճանապարհներն են, ջրամատակարարման համակարգերի հետ կապված տարբեր ենթակառուցվածքային ծրագրերը, սպորտային ենթակառույցների զարգացումը եւ այլն,- ասել է վարչապետը:

Ըստ Բախտաձեի, ինչպես խոստացվել է՝ 2022 թվականին Վրաստանում ամենաժամանակակից ենթակառույցները կլինեն՝ հնարավորություն ընձեռելով զարգացնել երկրի տնտեսությունն ու հաղթահարել աղքատությունը:



ՈՒԿՐԱԻՆԱ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՑ Վ. ԶԵԼԵՆՍԿՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Հուլիսի 21-ին Ուկրաինայում անցկացված արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու գլխավորած «Ժողովրդի ծառա» կուսակցությունը ցուցակներով ստացել է ձայների 42,85 տոկոսը եւ համամասնական ու մեծամասնական ընտրակարգերով խորհրդարանում կունենա 243 պատգամավորական տեղ:*

*Երկրորդ տեղում «Ընդդիմադիր հարթակ՝ կյանքի համար» կուսակցությունն է: Այն հավաքել է ձայների 12,97 տոկոսը եւ, ընդհանուր առմամբ, խորհրդարանում կստանա 41 պատգամավորական մանդատ: Նախկին նախագահ Պյոտր Պորոշենկոյի «Եվրոպական համերաշխություն» կուսակցությունը զբաղեցրել է 3-րդ տեղը՝ ստանալով 8,33 տոկոս կամ խորհրդարանի 22 մանդատ:*

*Նշենք, որ խորհրդարանական սովորական մեծամասնությունը կազմում է 226 տեղ:*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

### ԲՈՐԻՍ ՋՈՆՍՈՆԸ՝ 77-ՐԴ ՎԱՐՉԱՊԵՏ

*Միացյալ Թագավորության նոր վարչապետ է դառնում Բորիս Ջոնսոնը:*

*Ապագա վարչապետի ինքնությունը անվանել են «Պահպանողական կուսակցության նիստին: Նա պաշտոնը զբաղեցրել է հուլիսի 24-ից:*

*Վարչապետին բացահայտելու համար, «Պահպանողական կուսակցության» մոտ 160 հազար անդամ վերջնական ընտրությունը կատարել է արտաքին գործերի գործող եւ նախկին նախարարներ Ջերեմի Հանթի եւ Բորիս Ջոնսոնի միջեւ:*

*Ավելացնենք, որ Թերեզա Մեյը իր գործունեությունը կշարունակի որպես պատգամավոր:*

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԹԲԻԼԻՍԻԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ ՍՈՖԻՈ ԽՈՒՆՑԱՐԻԱՅԻ ՈՒ ՏԻԳՐԱՆ ՎԻՐԱԲՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անցկացմանն առնչվող հարցեր: Տիգրան Վիրաբյանը Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեին եւ նրա տեղակալ Սոփիո Խունձարիային հրավիրել է սեպտեմբերի 29-ին Երեւանի տոնակատարությանը, ինչպես նաեւ ընդունել է Թբիլիսոբային մասնակցելու՝ Սոփիո Խունձարիայի հրավերը:



Երեկոյան, Տիգրան Վիրաբյանն ու Սոփիո Խունձարիան մասնակցել են հայտնի երգահան Գիորգի Ցինցաձեի կինոերաժշտության երեկոյին, որը կայացել է Թբիլիսյան հին բակերից մեկում:

Թբիլիսի կատարած աշխատանքային այցի ընթացքում, Տիգրան Վիրաբյանն այցելել է Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շինհրապարակ եւ, թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի ուղեկցությամբ, ծանոթացել թատրոնի նոր շենքի կառուցման աշխատանքներին, խոսել առաջիկայում Երեւանում ադամյանցիների հյուրախաղային հեռանկարի մասին:

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

## ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ՝ ԿՐՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

***Հուլիսի 19-ին Վրաստանի ֆինանսական ոստիկանության կողմից Նինոծմինդայի մանկապարտեզների միավորման տնօրեն Նարինե Գինոսյանի եւ միավորման հաշվապահ Անժելիկա Փութուլյանի դեմ մեղադրանք է առաջադրվել՝ ծառայողական լիազորությունները զանցելու եւ մի քանի հազար լարի բյուջետային միջոցներ յուրացնելու փաստով, եւ հարուցվել է քրեական գործ: Հուլիսի 19-ին Ախալցիխեի քաղաքային դատարանը Նարինե Գինոսյանի համար՝ 5000, իսկ հաշվապահի համար՝ 3000 լարիի չափով գրավ նշանակելու որոշում էր կայացրել:***

### Ի՞ՆՉ Է ՈՒԶՈՒՄ ՆԱՐԻՆԵ ԳԻՆՈՍՅԱՆԸ

2000 թվականից Նարինե Գինոսյանը ակտիվ հասարակական գործունեություն էր իրականացնում, ղեկավարել է Նինոծմինդայի մանկապարտեզներից մեկը, նաեւ հասարակական հիմունքներով համարվել է բոլոր մանկապարտեզների մենեջերը:

Նարինե Գինոսյանը իր դեմ քրեական գործի հարուցումը առնչում է Նինոծմինդայից եւ Ախալքալաքից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի հետ: Նրա հայտարարությամբ, իր մոտ ծառայողական հիմնախնդիրները ծագեցին պատգամավորի կողմից սիրահետելու, սեռական բնույթի կապի առաջարկությունները մերժելուց հետո: Գինոսյանի խոսքով, երբ իբր պատգամավորի կողմից Եվրոպա գնալու, բնակարանը վերանորոգելու, մեքենա գնելու եւ ինտիմ առաջարկները իրեն չեն գայթակղել, Մկոյանն անցել է սպառնալիքների ու սկսել վրեժ լուծել: Խոստացել է, որ կխանգարի իր գործունեությանը: Նարինե Գինոսյանի խոսքով, հանկարծակի աուդիտ է նշանակվում մանկապարտեզում, ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվում, մասնավորապես՝ մանկապարտեզի բյուջեն ոչ նպատակային ծախսվելու պատճառով: Նա համոզված է, որ ինքն արդար է աշխատել, ոչ մի յուրացում չկա, պարզապես պարբերաբար իր աշխատակիցները ինչ-ինչ պատճառներով բացակայել են աշխատանքից, իսկ ինքն ու հաշվապահը փոխարինել են ու դրա դիմաց աշխատավարձ ստացել:

- Դա օրենքի խախտում չէ, արվում է բոլոր տեղերում,- ասաց նա:

Նարինե Գինոսյանի եւ նրա փաստաբան Միրիան Նիկոլաձեի պնդմամբ, նամակներ են ուղարկել Վրաստանի գլխավոր դատախազություն, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանին, նշել, որ Հենզել Մկոյանը սպառնում ու հետապնդում է իրեն, սակայն բոլոր նամակներն անպատասխան են մնացել:

### Ի՞ՆՉ Է ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆԸ

Տեղի ունեցածի կապակցությամբ հայտարարություն է տարածել նաեւ խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը: Հայտարարության մեջ, ելնելով համապատասխան մարմինների եզրակացություններից, տնօրենին մեղադրում է երկար տարիների ընթացքում մանկապարտեզի սնունդը յուրացնելու, աշխատանքային տրանսպորտային միջոցի համար հատկացված վառելիքն անձնական նպատակներով օգտագործելու ու այլ բնույթի կեղծարարությունների մեջ: Ինչ վերաբերում է Նարինե Գինոսյանի կողմից իրեն հասցեագրած մեղադրանքներին, ապա պատգամավորը դա համարում է անհիմն եւ նշում, որ բոլորը քաջատեղյակ են, որ Գինոսյանը մոտ հարաբերություններ ունի իրենց տարածաշրջանի մունիցիպալիտետներում գործող Միասնական ազգային շարժման ներկայացուցիչների հետ «...Նաեւ ուզում եմ տեղեկացնել հասարակությանը, որ տեղեկություն ունեմ «Ազգային շարժման» երկու ղեկավարի մասին, ովքեր արդեն հանդիպումներ են անցկացրել Գինոսյանի հետ եւ այս գործին քաղաքական երանգ տալու համար, նրանց իմ դեմ անհիմն ու կեղտոտ մեղադրանքների առաջադրում են խորհուրդ տվել: Դիմում եմ այս կուսակցության առաջնորդներին. վերջացնեն իրենց կեղտոտ գործողություններում երեխաների գումարի սեփականացումն ու օգտագործումն իմ դեմ, հակառակ դեպքում, կհանրայնացնեմ այս ղեկավարների ազգանունները եւ Նարինե Գինոսյանի հետ միասին, այս մարդկանց դեմ հայց կներկայացնեմ, իմ արժանիքներն ու պատիվը վիրավորող գործողությունների պատճառով»,- ասված է հայտարարությունում:

Նշենք, որ կասկածյալի խոսքերով իբր պատգամավորի պնդմամբ անցկացված ֆինանսների աուդիտի մասին մեղադրանքը, իրոք անհիմն է, քանի որ, ինչպես ավելի վաղ հայտարարել էր Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, բյուջետային ֆինանսավորմամբ բոլոր հաստատություններում պարբերաբար անցկացվում են ամենամյա պլանային ֆինանսների աուդիտ ստուգումներ:

### Ի՞ՆՉ Է ՄՏԱԾՈՒՄ ԾԱՌՈՒԿ ՄԱՆԱՍՅԱՆԸ

Ինչ վերաբերում է հասարակական արձագանքին, ապա դրա վառ ատահայտությունն է 72-ամյա նինոծմինդացի Ծառուկ Մանասյանի՝ խմբագրությանն հասցեագրված նամակը, որտեղ, մասնավորապես ասված է.

«Հեռուստացույցով տեսա եւ վրացական ԶԼՄ-ների կայքերում այդ մասին կարդացի: Ուղղակի զզվելի էր լսել Ձեզ, զզվելի էր, որովհետեւ խոսողը «մայր» էր, մանկավարժ, շրջանի մանկապարտեզների ցանցի, երիտասարդական կենտրոնի տնօրեն:

Մի՞թե կարելի է կին անձնավորությունը այդպիսի խոսքերով ելույթ ունենալ, մի՞թե այդ ժամանակ նրա աչքի առաջ չկանգնեցին նրա երեխաները, ամուսինը, մանկապարտեզի սաները, նրա աշխատակազմը:

Ես ամաչեցի նրա փոխարեն, ամաչեցի: Ես էլ եմ մանկավարժ:

Ասում եմ ամոթ է, ամոթ է ինձ համար, բոլորիս համար: Դուք կոչվում եք կին, գոնե կարդացել կամ գիտեք, թե ով է կին-մայրը:

Ինչպես ասում են՝ մեկնաբանությունները ավելորդ են:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲՈՒՀ

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԵՑ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

***Հուլիսի 24-ին Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին հանրագումարեց 2019 թվականի Միասնական ազգային քննությունների արդյունքները՝ հայտարարելով, որ քննություններն անցան հանգիստ պայմաններում, առավելագույն հարմարեցված իրավիճակում:***



Նախարարը շնորհակալություն հայտնեց քննությունների կենտրոնի աշխատակիցներին եւ բոլոր այն գերատեսչություններին, որոնք իրենց ավանդը ներդրեցին այդ կարեւորագույն գործընթացի հաջող անցկացման գործում:

Խոսելով կոնկրետ արդյունքների մասին՝ նախարարը նշեց, որ նախորդ տարիների համեմատ, զգալիորեն նվազել էր ուշացողների թիվը, ինչը նրա հավաստմամբ, քննությունների ազգային կենտրոնի կողմից անցկացված տեղեկատվական քարոզարշավի արդյունքն է:

Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Սոփո Գորգաձեի հայտարարությամբ, Միասնական ազգային քննությունների արդյունքները կիրապարակվեն օգոստոսի սկզբներին: Նախ, կիրապարակվեն ընդհանուր ունակությունների արդյունքները, ապա՝ առանձին առարկայական քննությունների արդյունքները:

- Մագիստրատուրայի եւ ընդունելության քննության, մանկավարժների իրավասության հաստատման քննության ընդհանուր վիճակագրությունը կիրապարակվի աստիճանաբար՝ մշակմանը զուգընթաց,- հայտարարեց ազգային կենտրոնի ղեկավարը:

Նշենք, որ այս տարի Միասնական ազգային քննությունների համար գրանցվել էր աննախընթաց թվով դիմորդ՝ 80 հազար: Քննությունները անցկացվեցին երկրի 11 քաղաքների 23 քննական կենտրոններում:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ

***Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր, ստանալով այլ երկրի քաղաքացիություն, կանգնել են վրացականը կորցնելու վտանգի առջեւ, կարող են մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը այդ հարցով դիմել Արդարադատության տուն:***

2018 թվականին «Վրաստանի քաղաքացիության մասին» օրենքում կատարված փոփոխություններով, երկրի քաղաքացիները երկքաղաքացիություն ունենալու իրավունք ստացան, դրա համար արդեն այլ երկրի քաղաքացիություն ունեցողները, ինչպես նաեւ այլ երկրի քաղաքացիության համար դիմողները, պարտավոր են այդ մասին տեղեկացնել Վրաստանի արդարադատության նախարարությանը:

Այսպիսով, Վրաստանի քաղաքացիությունը պահպանելու համար, Արդարադատության տուն դիմելու ժամկետը երկարաձգվել է. 2019 թվականի օգոստոսի 15-ի փոխարեն, կարելի է դիմել մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Խորհրդարանի սփյուռքի հարցերով հանձնաժողովի տեղեկատվության համաձայն, օրենքի փոփոխությունների ընդունումից հետո, Վրաստանի քաղաքացիությունը պահպանելու հարցով գործակալություն է դիմել 5 524 քաղաքացի:

Հիշեցնենք. 2017 թվականին Վրաստանի խորհրդարանը սահմանադրական փոփոխություններ ընդունեց՝ այլ երկրի քաղաքացիություն ստանալու դեպքում, արգելել Վրաստանի քաղաքացիությունից զրկելը:

Վրաստանի քաղաքացիությունը պահպանելու հարցով ծառայությանը դիմելու համար, պետք է վճարել 250 լարի: Նշված ժամկետից հետո քաղաքացին այլեւս չի կարողանա քաղաքացիության պահպանման պահանջով դիմել պետությանը եւ կկորցնի Վրաստանի քաղաքացիությունը:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

# «Agile Spirit 2019» ԲԱԶՄԱԶԳ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

***Ընթացիկ տարվա հուլիսի 27-ից օգոստոսի 9-ը, Վրաստանում կանցկացվեն բազմազգ Agile Spirit 2019 («Հստակ ոգի 2019») զորավարժությունները: Զորավարժությունները բացվեցին հուլիսի 27-ին Սենակիում, II հետեւակային բրիգադի զորամասում: Նշենք, որ «Հստակ ոգի» զորավարժությունները Վրաստանում անցկացվում են արդեն 9-րդ անգամ:***

Վրաստանի պաշտպանության նախարարության լրատվությամբ, այս տարվա վարժանքների նպատակն է՝ մասնակից երկրների միջեւ հարաբերությունների զարգացումը, օպերատիվ հնարավորությունների կատարելագործումը եւ հզորացումը բազմազգ միջավայրում օպերացիաներ ծրագրելու եւ կատարելու ժամանակ, կառավարման եւ վերահսկման հնարավորությունների զարգացումը դաշինքի ու գործընկեր երկրների միջեւ, ինչպես նաեւ Սեւ ծովի տարածաշրջանում կայուն եւ անվտանգ միջավայրի պահպանման ապահովումը:

Այս տարի զորավարժությունները անցկացվելու են երեք վայրերում՝ Սենակիում, II հետեւակային բրիգադի տարածքում, Օրփոլոյի եւ Վազիանիի ռազմակայաններում: Մասնակցելու է 3000 -ից ավելի զինվորական: Այս տարի Վրաստան է ժամանել 14 երկրի ներկայացուցիչ, այդ երկրներն են՝ ԱՄՆ-ը, Միացյալ Թագավորությունը, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Նորվեգիան, Բելգիան, Բուլղարիան, Հունաստանը, Մոնտենեգրոն, Ռումինիան, Թուրքիան եւ Ուկրաինան: Մասնակցում է նաեւ Վրաստանը:



## ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ



*Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության 2014-2017 թթ. նախագահ Էդուարդ Աղասարյանը նշանակվել է Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլու խորհրդական:*

*Հուլիսի 19-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Յուրիկ Ունանյանը նրան պաշտոնապես ներկայացրեց մունիցիպալիտետի աշխատակիցներին եւ հայտնեց, որ Է. Աղասարյանը Ախալքալաքի քաղաքապետարանի եւ Ախալցիխեի նահանգապետարանի շենքերում կունենա աշխատասենյակներ:*

*Մինչ այդ էլ նա վերաինտեգրման նախարարության ներկայացուցիչն էր: Eduard Aghasaryan*

## ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐԻ 37-ՐԴ ՕՐ. ՓՈԽՎՈՒՄ Է ՑՈՒՅՑԵՐԻ ՁԵՎԱՉԱՓԸ

*Հուլիսի 22-ից Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում, խորհրդարանի առջեւ ընթացող ցույցերն անցկացվում են այլ ձեւաչափով:*

*Ակցիայի կազմակերպիչները հայտարարել են, որ այսուհետ հանրությանը խորհրդարանի հարակից տարածքից առցանց հաղորդումներ կառաջարկվեն: Նախօրեին՝ բողոքի 32-րդ օրը, ելույթներին զուգահեռ տարածքում կազմակերպվել է նաեւ Flea Market, որտեղ ավելի քան 40 ստարտափ կազմակերպություններ ներկայացրել են իրենց արտադրանքը:*

*Հիշեցնենք. Թբիլիսիում բողոքի ակցիաներն սկսվել են հունիսի 20-ին, երբ Ռուսաստանի Դաշնության պետդումայի պատգամավոր Սերգեյ Գավրիլովը, որ Թբիլիսի էր ժամանել Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովին մասնակցելու նպատակով, զբաղեցրել էր Վրաստանի խորհրդարանի խոսնակի աթոռը: Ակցիայի մասնակիցների պահանջը նույնն է՝ ՆԳ նախարար Գիորգի Գախարիայի հրաժարականը:*

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

***Հուլիսի 22-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի պատվիրակության անդամները Երեւանում հանդիպում ունեցան Հայաստանի Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) փոխնախագահ Միքայել Փաշայանի հետ:***



Պատվիրակությունը Հայաստան էր ժամանել Հայաստանի ՊԵԿ տեղեկատվական համակարգերին ծանոթանալու, փորձի փոխանակման եւ համագործակցության նոր հնարավոր ոլորտների բացահայտման նպատակով:

ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության աշխատակիցները ներկայացրին «Հայաստանի արտաքին առեւտրի ազգային մեկ պատուհան» պորտալում գործող համակարգերը, դրանց փոխգործելիության սկզբունքները եւ տեխնիկական բնութագրերը, «մեկ պատուհան» համակարգի հետագա զարգացման հեռանկարները եւ նախագծերը, ինչպես նաեւ մեծ ծավալի տվյալների (big data) վերլուծության հիման վրա գործող անալիտիկ հաշվետվությունների համակարգը: Հյուրերին տպավորել են Պետական եկամուտների կոմիտեի կողմից կիրառվող տեղեկատվական համակարգերն ու լուծումները:

Քննարկվեցին նաեւ երկկողմ համագործակցության մի շարք այլ ուղղություններ, այդ թվում՝ իրականացման փուլում գտնվող երկու երկրների մաքսային մարմինների միջեւ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի ներդրման նախագիծը:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՍԻԳԱՐԵՏ

***Հուլիսի 9-17-ը «Սադախլո» ավտոմոբիլային, «Սարփի», «Կարմիր կամուրջ» եւ «Նինոծմինդա» մաքսային անցակետերում կանխվել է ապօրինաբար երկրի տարածք չհայտագրված սիգարետների ներկրման փորձը:***

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի աշխատակիցները կասկածի հիման վրա խուզարկել են Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքացիների: Նրանց ուղեբեռի խուզարկության ժամանակ հայտնաբերվել է, ընդհանուր առմամբ, 20640 գլանակ չհայտագրված սիգարետ:

Վրաստանի հարկային օրենսգրքի 269 հոդվածի 14-րդ մասի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացիների ապրանքը առգրավվել է, իսկ նրանցից յուրաքանչյուրը տուգանվել է 1000 լարի գումարով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՆԵՆ ԸՆԴԳԾՎԱԾ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ

եւ այլ ոլորտներում եւ հույս հայտնեց, որ բարեկամ երկրի ԱԳ նախարարի այցը նոր ազդակ կհանդիսանա փոխհամագործակցության զարգացմանը:

Իր հերթին, Զորիապ Մացականյանը Վրաստանի վարչապետին տեղեկատվություն փոխանցեց իր վրաց գործընկերոջ հետ քննարկած հարցերի մասին:

### ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ



Հուլիսի 24-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին հանդիպում ունեցավ երկօրյա պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող իր հայ գործընկեր Զոհրաբ Մնացականյանի հետ:

Հանդիպմանն ընդգծվեց վերջին ժամանակներում երկու երկրների միջեւ արբեր հարթակներում համագործակցության զարգացման կայուն դինամիկան, նշվեց, որ համագործակցության խորացմանը յուրատեսակ ազդակ են հաղորդում երկու երկրների վարչապետերի, նախագահների հաճախակի փոխայցելությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները: Նաեւ նշվեց, որ ինտենսիվ հանդիպումներ են անցկացվում նաեւ ատաքին գերատեսչությունների մակարդակով: Մասնավորապես, վերջին մեկ տարվա ընթացքում երկու երկրնեի ԱԳ նախարարները միմյանց հետ հանդիպելու եւ կարծիքներ փոխանակելու մի քանի առիթներ են ունեցել: Որպես համագործակության օրինակ՝ կողմերը նշեցին միջազգային բազմաթիվ հարթակներում համաձայնեցված գործողությունները եւ եւս մեկ անգամ վերահաստատեցին իրենց մտադրությունը համատեղ աշխատանքով է՛լ ավելի խորացնել նման համագործակցությունը:

Հանդիպմանը կողմերը փոխանակել են իրենց մոտեցումները եւ տեսակետները տարբեր հարցերի շուրջ, որոնք վերաբերում են տարածաշրջանային անվտանգությանը եւ վերահաստատել հանձնառությունը տարածաշրջանում առկա հակամարտությունների լուծմանը բացառապես խաղաղ ճանապարհով, նաեւ այն ըմբռնումը, որ յուրաքանչյուր հակամարտություն ունի իր յուրահատկությունները եւ իր բանակցային շրջանակը, որի մեջ տեղի է ունենում խաղաղ կարգավորում:

Հանդիպման արդյունքներով, ստորագրվեց համագործակցության խորացման հուշագիր:

### ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հուլիսի 25-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն հանդիպում ունեցավ Հայաստանի ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ: Հանդիպմանը կողմերը խոսեցին հարաբերությունների ամրապնդման եւ միջխորհրդարանական համագործակցության խորացման մասին: Կողմերը անդրադարձ կատարեցին նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահի Հայաստան կատարելիք պաշտոնական այցի նշանակության, երկու երկրների օրենսդիր բարձրագույն մարմինների միջեւ կապերի է՛լ ավելի խորացմանը:

Կողմերը խոսեցին նաեւ Վրաստան-Հայաստան տնտեսական համագործակ-



ցության հանձնաժողովի գործունեության եւ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության եւ կայունության պահպանման գործում երկու երկրների բացառիկ դերի մասին:

### «ԱՅՑԸ ԱՌԱՎԵԼ ՔԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԷՐ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻ»

Թբիլիսիում կայացած հանդիպումների ավարտից հետո, Զոհրաբ Մնացականյանը, ներկայացնելով պաշտոնական այցի շրջանակներում քննակված հարցերը, հայտարարեց.

- Այս պաշտոնական այցի շրջանակում, մենք նորից անդրադարձանք այն բոլոր հարցերին, որոնք վերաբերում են մեր երկու երկրների անվտանգության համակարգերին եւ այն մարտահրավերներին, որ առնչվում են մեր անվտանգության համակարգերին: Նաեւ ընդգծեցինք այն, ինչ շատ բնական համատեղ շահագրգռվածություն է՝ զարգացնել հարաբերությունները այն ուղղությամբ, որոնք ներդրում են տարածաշրջանային խաղաղությանը եւ կայունությանը: Այս առումով, մեր երկու երկրներն ունեն շատ ընդգծված հետաքրքրություն եւ շահագրգռվածություն,- նշեց Զոհրաբ Մնացականյանը:

ԱԳ նախարարի խոսքով, իրենք փորձում են ավելի քաջալերել բիզնես-շրջանակների, քաղաքացիական հասարակությունների շփումները, համատեղ աշխատանքը բոլոր մակարդակներում:

- Սա նույնպես, բնականաբար, այն հարցերից է, որոնց մենք անդրադարձել ենք ե՛ւ Վրաստանի նախարարի, ե՛ւ Վրաստանի վարչապետի հետ հանդիպման ժամանակ: Եվ մեզ համար աշխատելու շատ մեծ հիմք են Երեւանում տեղի ունեցած միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները, որոնց ծավալը բավական մեծ է: Անդրադարձ է կատարվել բազմաթիվ հարցերի՝ ենթակառուցվածքներից մինչեւ տնտեսության, կրթության, գիտության, զբոսաշրջության եւ այլ ոլորտներին: Բավական ծավալուն են հարաբերությունները, եւ ծավալուն է օրակարգը, որը ձեւավորվել է մեր կառավարությունների միջեւ ու արտահայտվել միջկառավարական հանձնաժողովների շրջանակում: Դրա հարցերը, եւ որոշ հարցերին անդրադառնալը, որոնք բխում էին միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներից, նույնպես այսօր մեր օրակարգային հարցերն էին եւ արտահայտվել են թե՛ արտգործնախարարի, թե՛ Վրաստանի վարչապետի հետ հանդիպումների ժամանակ,- ասաց ԱԳ նախարարը:

**Թբիլիսում կայացած հանդիպումներին մասնակցեցին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը եւ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն:**

### ԸՆԴԳԾՎԵՑ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄՐՋՈՂ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թբիլիսի պաշտոնական այցի շրջանակներում, Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնում հանդիպում ունեցավ վիրահայության նեկայացուցիչների հետ:

Հանդիպման մեկնարկին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Զոհրաբ Մնացականյանն ամփոփեց այցի շրջանակներում ունեցած հանդիպումները՝ վերահաստատելով Վրաստանի հետ դարերի խորքից եկող եղբայրական հարաբերություններն առավել ամրապնդելու Հայաստանի պատրաստակամությունը:

Նախարարն իր խոսքում նշեց, որ թեեւ Հայաստանն ու Վրաստանը տարածաշրջանում ունեն տարբեր խնդիրներ, այնուամենայնիվ, երկու երկրներին միավորում է տարածաշրջանային խաղաղության եւ անվտանգության օրակարգի, սեփական ժողովուրդների բարեկեցությանը նպաստող միջավայր ստեղծելու ընդհանուր շահը: Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը բարձր գնահատեց այն կամրջող դերակատարությունը, որ ունի վիրահայ համայնքը երկու երկրների, երկու ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդման եւ երկկողմ օրակարգի առաջմղման գործում:

Անդրադառնալով տարածաշրջանային մի շարք հիմնախնդիրների, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացում Հայաստանի մոտեցումները եւ սկզբունքային դիրքորոշումը:

Հանդիպման ավարտին, նախարար Մնացականյանը պատասխանեց վիրահայ համայնքի ներկայացուցիչների բազմաթիվ հարցերին, տեղի ունեցավ վիրահայ համայնքի հուզող խնդիրների շուրջ մտքերի հանգամանալից փոխանակում:

Հարկ է նշել, որ հանդիպման առանձին մասնակիցների կողմից առաջադրվող հարցերը, ցավոք, ավելի շատ կրում էին հարցվողների ինքնացուցադրման, ինքնագովազդի, քան էական, սպառիչ պատասխան ստանալու միտում, քանի որ այդ հարցերը գրեթե բոլորին ծանոթ էին, եւ բոլորը քաջատեղյակ էին թե կոնկրետ ինչ է իրականացվում դրանց կարգավորման համար: Մասնավորապես, բարձրացվեց Վրաստանում Հայաստանի դեսպանատան, Ալեքսանդր Մանթաշովի տան, Հայաստանի ղեկավարության կողմից վիրահայությանը հուզող խնդիրների եւ տեղեկատվական դաշտում հակահայկական միտվածության նկատմամբ այսպես կոչված «անուշադրության» եւ, ինչպես սովորաբար մեզանում լինում է, հասարակական հարցերում անձնական երանգների ներբերմամբ համայնքային ղեկավարնեի վարկաբեկման մասին հացերը: Բարեբախտաբար, Զոհրաբ Մնացականյանը դիվանագետին բնորոշ զսպվածությամբ կարողացավ հարցվողներին «իրենց տեղը նստեցնել»:

Նշենք, որ վիրահայ համայնքի հետ հանդիպումից առաջ, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարն այցելել էր Թբիլիսի Սուրբ Էջմիածին եկեղեցի:

ԱՎԱՆԴԱԿԱՆ

# ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, ՋԻՎԱՆՈՒՆ, ՏԵՐՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ, ԿԱՐԾԱԽՈՒՄ ԵՎ ԳԱՆՁԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հան Տերյանի 134-ամյակին:

Ներկա էին Սամցխե-Ջավախեթիի նահանգապետարանի, Ախալցիխեի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի ղեկավարներ, Հայաստանից ժամանած հյուրեր, այդ թվում՝ ՀՀ Գրողների միության ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ, Ախալցիխեի մոտակա գյուղերի բնակիչներ:

### ԵՐԳԻ ՏՈՆ՝ ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆՈՒ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Հուլիսի 20-ին, մեծանուն աշուղ Ջիվանու հայրենի գյուղում՝ Ալքալաքիի մունիցիպահտետի Կարծախում մեծ շուքով նշվեց ավանդական Ջիվանու տոնը:

Տոնական օրը սկսվեց Կարծախ գյուղի Սուրբ Հովհաննու Կարապետ եկեղեցում՝ Սուրբ պատարագով: Այնուհետեւ, միջոցառման մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին գյուղամեջում կանգնեցված Ջիվանու արձանին: Աշուղ Ջիվանու տուն-թանգարան. հանդիսության



Աշուղ Ջիվանու տուն-թանգարանում, Կարծախ

մասնակիցները ծանոթացան աշուղի կենսագրությանն ու մշակութային ժառանգությանը:

Ջիվանու մեծարմանը նվիրված տոնահանդեսին վերստին տարածվեց նրա երգն ու երաժշտությունը: Բեմում Հայաստանի Հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա», Ախալքալաքիի Մշակույթի տան «Ջիվանի» համույթները: Հնչեցին Ջիվանու եւ այլ աշուղների սիրված երգեր, ինչպես նաեւ իր կատարումներով հանդես եկավ մեր ժամանակների սիրված Աշուղ Լեյլին:

Միջոցառմանը խոսքով հանդես եկան Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Վաչագան Շոռմուտյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի (ՋԱՀ) Հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, ՋԱՀ հիմնադրամի գործադիր տնօրեն Սամվել Մկոյանը, Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Մաղաքիա վարդապետ Ամիրյանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)